ՎԴ2/0087/05/21

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՎԵՃԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2021 թվականի հուլիսի 2-ին ք. Երևան

ուսումնասիրելով ըստ հայցի «Դյութի Ֆրի Հոլդինգ» ՍՊԸ-ի ընդդեմ «Այրում համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի՝ Այրում համայնքի ղեկավարի 2021 թվականի հունվարի 29-ի թիվ 09-Ա որոշումը և որպես հետևանք՝ «Այրում համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի և «Արմ-Հելիա Դյութի Ֆրի» ՍՊԸ-ի միջև 2021 թվականի հունվարի 29-ին կնքված պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի կառուցապատման իրավունքի տրամադրման մասին պայմանագիրն անվավեր ճանաչելու պահանջի մասին թիվ ՎԴ2/0087/05/21 վարչական գործով ենթակայության մասին վեճը լուծելու համար Վճռաբեկ դատարանի նախագահին դիմելու վերաբերյալ Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2021 թվականի հունիսի 16-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Գործի դատավարական նախապատմությունը.

1. «Դյութի Ֆրի Հոլդինգ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը 2021 թվականի մայիսի 17-ին հայցադիմում է ներկայացրել Վարչական դատարան ընդդեմ «Այրումի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի, որով պահանջել է անվավեր ճանաչել Այրում համայնքի ղեկավարի՝ 2021 թվականի հունվարի 29-ի թիվ 09-Ա որոշումը և

որպես հետևանք՝ անվավեր ճանաչել «Այրումի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի և «Արմ-Հելիա Դյութի Ֆրի» ՍՊԸ-ի միջև 2021 թվականի հունվարի 29-ին կնքված պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի կառուցապատման իրավունքի տրամադրման մասին պայմանագիրը:

2. Վարչական դատարանը (դատավոր՝ Ա. Մկրտչյան) 2021 թվականի մայիսի 24-ին որոշում է կայացրել հայցադիմումը վերահասցեագրելու մասին՝ հետևյալ պատճառաբանությամբ. *«Դատարանն արձանագրում է, որ պետական սեփականություն հանդիսացող հողամասը կառուցապատման իրավունքով տրամադրելու կապակցությամբ իրավահարաբերությունը ծագել է մասնավոր իրավունքի ոլորտում, քանի որ իրավահարաբերության կողմերը մասնավոր իրավունքի սուբյեկտներ են: Այրում համայնքը տվյալ իրավահարաբերություններում հանդես չի եկել որպես հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտ, այլ, հանդես գալով Հայաստանի Հանրապետության (գույքի սեփականատիրոջ) անունից, կայացրած որոշումով իր կամքն է արտահայտել մասնավոր իրավահարաբերությունների մեջ մտնելու համար: Այսինքն՝ այդ իրավահարաբերությունների բովանդակությունը համայնքի կողմից իր հանրային իշխանական լիազորությունների իրականացման պարտականությունների կատարումը չի եղել: Դատարանի սույն եզրահանգումը հիմնվում է նաև այն հանգամանքի վրա, որ նշված որոշումն առանց մյուս կողմի կամքի արտահայտության որևէ հետևանք չէր կարող առաջացնել:*

(…) Նկատի ունենալով, որ հայցադիմումը ներկայացվել է «Այրումի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի դեմ, իսկ վերջինիս հասցեն է՝ ՀՀ Տավուշի մարզ, քաղաք Այրում, Աբովյան 1՝ Դատարանը գտնում է, որ հայցադիմումը պետք է վերահասցեագրել ՀՀ Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին»:

Թիվ ՎԴ2/0087/05/21 գործը 2021 թվականի հունիսի 7-ին մակագրվել է Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ա.Կուրեխյանին:

3. Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը (դատավոր Ա. Կուրեխյան), 2021 թվականի հունիսի 16-ի որոշմամբ գործի ենթակայության շուրջ ծագած վեճը լուծելու նպատակով գործն ուղարկել է Վճռաբեկ դատարանի նախագահին՝ հետևյալ պատճառաբանությամբ. *«(…) Դատարանը գտնում է, որ վիճարկվող որոշումը կայացնելիս համայնքի ղեկավարը հանդես է եկել ոչ թե որպես մասնավոր*

իրավունքի սուբյեկտ, այլ որպես հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտ՝ գործելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում (...):

(...) «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տեղական ինքնակառավարումը տեղական ինքնակառավարման մարմինների իրավունքն ու կարողությունն է համայնքի բնակիչների շահերից ելնելով, Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան, սեփական պատասխանատվությամբ լուծելու համայնքային նշանակության հանրային հարցերը, հետևաբար ենթադրվում է, որ որոշումը կայացվել է հանրային, տվյալ դեպքում՝ համայնքի և դրա բնակիչների շահերից ելնելով»:

4. Թիվ ՎԴ2/0087/05/21 վարչական գործը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2021 թվականի հունիսի 25-ին:

Ենթակայության մասին վեճի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. ՀՀ Տավուշի մարզի Այրում համայնքի ղեկավարի՝ 2021 թվականի հունվարի 29-ի թիվ 09-Ա որոշմամբ Բագրատաշեն գյուղի 19-րդ փողոցի թիվ 69/5 հասցեում գտնվող՝ ՀՀ սեփականությունը հանդիսացող, 11-016-0236-0110 կադաստրային ծածկագրով 0.1036 հա հողամասը 600.000 ՀՀ դրամ տարեկան վարձավճարով կառուցապատման իրավունքով տրամադրվել է «ԱՐՄ-ՀԵԼԻԱ ԴՅՈՒԹԻ ՖՐԻ» ՍՊԸ-ին՝ 50 տարի ժամկետով:

6. «Այրումի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի և «ԱՐՄ-ՀԵԼԻԱ ԴՅՈՒԹԻ ՖՐԻ» ՍՊԸ-ի միջև 2021 թվականի հունվարի 29-ին կնքվել է պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի կառուցապատման իրավունքի տրամադրման մասին պայմանագիր:

Վճռաբեկ դատարանի նախագահի պատճառաբանությունները և եզրահանգումը.

7. Սույն գործով Վճռաբեկ դատարանի նախագահի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. *պետական սեփականություն հանդիսացող հողամասը կառուցապատման իրավունքով տրամադրելու հետ կապված վեճը բխում է հանրային, թե՞ մասնավոր իրավահարաբերություններից:*

8. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածի համաձայն՝ *«Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը քննում է դատական կարգով քննության ենթակա բոլոր գործերը, բացառությամբ մասնագիտացված դատարանների ենթակայությանը վերապահված գործերի»:*

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Վարչական դատարանին են ենթակա Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված գործերը»:*

9. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Վարչական դատարանին ընդդատյա են հանրային իրավահարաբերություններից ծագող բոլոր գործերը (...)»:*

10. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Քաղաքացիական գործերը ենթակա են քննության առաջին ատյանի դատարանում, բացառությամբ «Մանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերի:*

2. Քաղաքացիական են համարվում իրավունքի մասին վեճի հետ կապված բոլոր գործերը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի (...) կամ Սահմանադրական դատարանի իրավասությանը վերապահված գործերի: (...)»:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 126-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ *«Առաջին ատյանի դատարանը մերժում է հայցադիմումի ընդունումը, եթե գործը ենթակա չէ քննության քաղաքացիական դատավարության կարգով»:*

11. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 81-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Վարչական դատարանը, գործի քննության ցանկացած փուլում պարզելով, որ տվյալ հայցադիմումի պահանջն ընդդատյա չէ իրեն, այն պատճառաբանված որոշմամբ վերահասցեագրում է ըստ ընդդատության»:*

12. Սույն որոշման 8-11-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրն առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին է վերապահել այն բոլոր գործերի քննությունը, որոնց քննությունը վերապահված չէ մասնագիտացված դատարաններին, այդ թվում՝ վարչական դատարանին: Միևնույն ժամանակ օրենսդիրը սահմանել է վարչական դատարանի ընդդատության շրջանակը, որում ներառված են հանրային իրավահարաբերություններից բխող վեճերից ծագող գործերը:

Փաստորեն, որևէ դատական գործի՝ վարչական կամ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում քննության ենթակա լինելու հարցը որոշվում է՝ հիմք ընդունելով այն իրավահարաբերության բնույթը (մասնավոր կամ հանրային), որից բխող վեճը հանձնվում է դատարանի քննությանը:

Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ օրենսդիրը վարչական դատարանի ընդդատության և առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի ենթակայության կանոնների խախտման դեպքում նախատեսել է տարբեր իրավական հետևանքներ:

Այսպես՝ ի տարբերության քաղաքացիական դատավարության, որտեղ ենթակայության կանոնների խախտումը հայցադիմումի ընդունելության փուլում հանգեցնում է հայցադիմումի ընդունումը մերժելուն, վարչական դատավարությունում հայցվորի կողմից ընդդատության կանոնները չպահպանելու հետևանքը հայցադիմումը վերահասցեագրելու՝ վարչական դատարանի լիազորության կիրառումն է: Վերոգրյալ կարգավորումների տարբերությունը պայմանավորված է վարչական արդարադատության առանձնահատկություններով, մասնավորապես՝ վարչական դատավարությունում դատարանի ակտիվ դերակատարմամբ:

Այսպիսով, յուրաքանչյուր դեպքում վարչական դատարանը պարտավոր է պարզել՝ արդյոք կոնկրետ գործն ընդդատյա է (ենթակա է) տվյալ դատարանին, թե՝ ոչ, և նշված հարցի կապակցությամբ բացասական եզրահանգում կատարելու դեպքում պարտավոր է հայցադիմումը վերահասցեագրել ըստ ընդդատության: Նույն իրավիճակում առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը պարտավոր է դրա ընդունումը մերժել՝ գործը քաղաքացիական դատավարության կարգով քննության ենթակա չլինելու հիմքով:

13. Հանրային և մասնավոր իրավահարաբերությունների տարանջատման հարցին մանրամասն անդրադարձ է կատարվել Վճռաբեկ դատարանի՝ *«Վեստ» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ էկոնոմիկայի նախարարության մրցավոր սեփականության գործակալության* վարչական գործով 2016 թվականի ապրիլի 22-ի որոշմամբ[1]:

14. Սույն գործով վիճելի իրավահարաբերության բնույթը պարզելու համար անհրաժեշտ է վերլուծել պետական սեփականություն հանդիսացող հողամասը կառուցապատման իրավունքով տրամադրելու հարաբերությունները կարգավորող իրավական նորմերը:

15. Այսպես՝ ՀՀ Սահմանադրության 154-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Կառավարությունը կառավարում է պետական սեփականությունը»:*

[1] Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի ապրիլի 22-ի թիվ ՎԴ/0830/05/14 որոշումը:

ՀՀ Սահմանադրության 182-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները լինում են սեփական՝ համայնքի պարտադիր և կամավոր խնդիրների լուծման նպատակով, ինչպես նաև պետության կողմից պատվիրակված»:*

ՀՀ Սահմանադրության 182-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Պետական մարմինների լիազորությունների առավել արդյունավետ իրականացման նպատակով դրանք օրենքով կարող են պատվիրակվել տեղական ինքնակառավարման մարմիններին»:*

16. «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Տեղական ինքնակառավարման մարմիններն են համայնքի ավագանին և համայնքի ղեկավարը, որոնք ընտրվում են հինգ տարի ժամկետով»:*

Նույն օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ *«Համայնքի ղեկավարը նույն բնագավառում իրականացնում է պետության պատվիրակած հետևյալ լիազորությունները. (...) համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերին, հողերի օգտագործման սխեմաներին համապատասխան՝ օրենքով սահմանված դեպքերում ու կարգով օտարում կամ օգտագործման է տրամադրում համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող հողամասերը»:*

17. ՀՀ հողային օրենսգրքի 1-ին հոդվածի 1-ին կետի համաձայն՝ *«Հողային օրենսդրությունը ներառում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները, նույն օրենսգիրքը և դրան համապատասխան ընդունված հողային հարաբերությունները կարգավորող Հայաստանի Հանրապետության այլ օրենքները (...)»:*

Նույն օրենսգրքի 57-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Պետության և համայնքների սեփականության հողամասերը տրամադրվում են սեփականության, կառուցապատման կամ օգտագործման իրավունքով»:*

ՀՀ հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Համայնքների վարչական սահմաններում գտնվող պետության և համայնքների սեփականությանը պատկանող հողամասերը (բացառությամբ պետական սեփականություն հանդիսացող բնության հատուկ պահպանվող տարածքների հողամասերի, բնապահպանական և անտառային հողերի) վարձակալության կամ կառուցապատման իրավունքով են տրամադրում համայնքների ղեկավարները»:*

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *«Պետության և համայնքների սեփականությանը պատկանող հողամասերը վարձակալության կամ կառուցապատման իրավունքով տրամադրվում են մրցույթով: Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հողամասն առանց մրցույթի վարձակալության կամ կառուցապատման իրավունքով տրամադրման դեպքերը սահմանում է կառավարությունը»:*

18. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 463-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *«Սույն օրենսգրքում կամ այլ օրենքում նշված դեպքերում գույքը կամ գույքային իրավունքը վաճառելու մասին պայմանագրերը կարող են կնքվել միայն սակարկությունների միջոցով: Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ սակարկություններն անց են կացվում աճուրդի կամ մրցույթի ձևով»:*

19. Սույն որոշման 15-18-րդ կետերում վկայակոչված իրավանորմերի վերլուծությունից հետևում է, որ պետական սեփականության կառավարումն իրականացվում է Կառավարության կողմից: Միևնույն ժամանակ, նշված լիազորության իրականացումը կարող է փոխանցվել համայնքներին՝ որպես պետության պատվիրակած լիազորություն, որն իրականացնում են տեղական ինքնակառավարման մարմինները՝ համայնքի ավագանին և համայնքի ղեկավարը: Ըստ այդմ, համայնքի ղեկավարը համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերին, հողերի օգտագործման սխեմաներին համապատասխան՝ օտարում կամ օգտագործման է տրամադրում համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող հողամասերը՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, ՀՀ հողային օրենսգրքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով:

20. ՀՀ Սահմանադրության 10-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է՝ *«Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և հավասարապես պաշտպանվում են սեփականության բոլոր ձևերը»:*

21. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 128-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ *«Հայաստանի Հանրապետությունը և համայնքները քաղաքացիական օրենսդրությամբ ու այլ իրավական ակտերով կարգավորվող հարաբերություններում հանդես են գալիս այդ հարաբերությունների մյուս մասնակիցների՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց հետ հավասար հիմունքներով»:*

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 129-րդ հոդվածի համաձայն՝ *«1.Պետական մարմինները Հայաստանի Հանրապետության անունից իրենց գործողություններով կարող են գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ ու պարտականություններ ձեռք բերել ու*

իրականացնել, ինչպես նաև դատարանում հանդես գալ իրենց իրավասության շրջանակներում:

2. *Համայնքների անունից իրենց գործողություններով կարող են նույն հոդվածի 1-ին կետում նշված իրավունքներ և պարտականություններ ձեռք բերել ու իրականացնել տեղական ինքնակառավարման մարմինները՝ իրենց իրավասության շրջանակներում: (...)»:*

22. Սույն որոշման 20-21 կետերում վկայակոչված իրավադրույթների վերլուծությունից հետևում է, որ պետությունը և համայնքը ֆիզիկական ու իրավաբանական անձանց հետ հավասար հիմունքներով մասնակցում են քաղաքացիական իրավահարաբերություններին, իրենց իրավասության սահմաններում կարող են ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ ու պարտականություններ, այդ թվում նաև՝ կառուցապատման իրավունքով տրամադրել պետական կամ համայնքային սեփականությունը հանդիսացող հողամասը: Ընդ որում, այն դեպքում, երբ պետական սեփականությունը տնօրինելու լիազորությունը պատվիրակված է համայնքին, այն իրացվում է տեղական ինքնակառավարման մարմնի համապատասխան որոշմամբ, որի հիման վրա կնքվում է հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման մասին պայմանագիր:

23. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- ՀՀ Տավուշի մարզի Այրում համայնքի ղեկավարի՝ 2021 թվականի հունվարի 29-ի թիվ 09-Ա որոշմամբ Բագրատաշեն գյուղի 19-րդ փողոցի թիվ 69/5 հասցեում գտնվող՝ ՀՀ սեփականությունը հանդիսացող 11-016-0236-0110 կադաստրային ծածկագրով 0.1036 հա հողամասը 600.000 ՀՀ դրամ տարեկան վարձավճարով կառուցապատման իրավունքով տրամադրվել է «ԱՐՄ-ՀԵԼԻԱ ԴՅՈՒԹԻ ՖՐԻ» ՍՊԸ-ին՝ 50 տարի ժամկետով,

- «Այրումի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի և «ԱՐՄ-ՀԵԼԻԱ ԴՅՈՒԹԻ ՖՐԻ» ՍՊԸ-ի միջև կնքվել է պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի կառուցապատման իրավունքի տրամադրման մասին պայմանագիր, որի համաձայն՝ Այրում համայնքի Բագրատաշեն գյուղի 19-րդ փողոցի թիվ 69/5 հասցեում գտնվող 11-016-0236-0110 կադաստրային ծածկագրով 0.1036 հա հողամասը 600.000 ՀՀ դրամ տարեկան վարձավճարով կառուցապատման իրավունքով տրամադրվել է «ԱՐՄ-ՀԵԼԻԱ ԴՅՈՒԹԻ ՖՐԻ» ՍՊԸ-ին՝ 50 տարի ժամկետով:

24. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 20-22-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո, պետք է փաստել, որ համայնքի վարչական սահմաններում

գտնվող և պետական սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տնօրինման փաստով ծագում են քաղաքացիաիրավական հարաբերություններ, որոնց համայնքը՝ ի դեմս պետության, մասնակցում է քաղաքացիական շրջանառության մյուս մասնակիցների հետ հավասար հիմունքներով: Նշված իրավազորության իրականացումը կապված չէ վերջինիս հանրային-իշխանական (գործադիր-կարգադրիչ) գործառույթների իրականացման հետ:

Վերոգրյալից հետևում է, որ թեև ՀՀ Տավուշի մարզի Այրում համայնքի ղեկավարի՝ 2021 թվականի հունվարի 29-ի թիվ 09-Ա որոշման և դրա արդյունքում կնքված պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի կառուցապատման իրավունքի տրամադրման մասին պայմանագրի հիման վրա ծագած իրավահարաբերությանը մասնակցում է հանրային իշխանության սուբյեկտ հանդիսացող տեղական ինքնակառավարման մարմինը, այդուհանդերձ, այդ հարաբերություններում վերջինս չունի օրենքով սահմանված իշխանական լիազորություններ իրականացնելու պարտականություն, այլ իրացնում է պետության՝ որպես քաղաքացիական շրջանառության մասնակցի՝ քաղաքացիաիրավական բնույթի իրավունքներն ու պարտականությունները:

Վերոգրյալի հաշվառմամբ, նկատի ունենալով, որ սույն գործով «Դյութի Ֆրի Հոլդինգ» ՍՊԸ-ի և «Այրում համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի միջև ծագած իրավական վեճը բխում է մասնավոր (քաղաքացիաիրավական՝ պայմանագրային) իրավահարաբերությունից, թիվ ՎԴ2/0087/05/21 գործը ենթակա է Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ մասերով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

թիվ ՎԴ2/0087/05/21 գործն ըստ հայցի «Դյութի Ֆրի Հոլդինգ» ՍՊԸ-ի՝ ընդդեմ «Այրում համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի, ենթակա է Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

ԼԻԼԻԹ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ